ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

12 մարտի 2012թ. թիվ 88

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ
ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի “Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին” թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.15 կետի “ժա” ենթակետով՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. Լոռու մարզի համայնքներում անասնագլխաքանակի ընտրանքային հաշվառում անցկացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Հանձնաժողովին՝

1) Անասնագլխաքանակի հաշվառման վերաբերյալ կատարել ընտրանքային ուսումնասիրություններ մարզի համայնքներում:

2) Կազմել համայնքի անասնագլխաքանակի հաշվառման ակտ՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3) Հաշվառման աշխատանքներն ավարտել մինչև 2012թ. մայիսի 1-ը:

3. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ.Հակոբյանին՝

Հաշվառման ընթացքում առաջացած տարբերությունների վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2012թ. մարտի 12
ք.Վանաձոր